ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2024

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված է «Գերմաներեն» առարկան դասավանդող ուսուցիչների ատեստավորման քննության թեստի կառուցվածքը, տրված են առաջադրանքների տեսակների նկարագրությունը, գնահատման չափանիշները, դրանց լուծման եղանակների բացատրությունները, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար հիմք են ընդունվել «Գերմաներեն» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը և չափորոշիչները:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստային առաջադրանքներն ունեն հետևյալ կառուցվածքային տիպերը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:

Ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի համար տրվում է 1 միավոր:

«Գերմաներեն» առարկայի թեստից հնարավոր է հավաքել առավելագույնը 65 միավոր:

Առաջադրանքների կատարման համար հատկացվում է 180 րոպե: Թեստավորումն անցկացվելու է համակարգչային եղանակով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Առաջադրանքների կառուցվածքային տեսակները

- ***Մեկ ճիշտ պատասխանով առաջադրանքներ***

  Կառուցվածքը: Տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

  Անհրաժեշտ է նշել ճիշտ պատասխանը:

  Գնահատման չափանիշը: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

- ***Բազմակի ճիշտ պատասխանով առաջադրանքներ***

  Կառուցվածքը: Տրվում է որևէ նյութ՝ տեքստ, նախադասություն, բառաշարք և այլն:

  Անհրաժեշտ է ընտրել և նշել պահանջին համապատասխանող ճիշտ տարբերակները:

  Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ միավոր, իսկ սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

- **Համարների հստակ հերթականության պահպանմամբ առաջադրանքներ՝**

  Կառուցվածքը: Տրվում է որևէ նյութ՝ պարբերություններ, նախադասություններ:

  Անհրաժեշտ է պատասխանի համար նախատեսված դաշտում մուտքագրել տրված պարբերությունների, նախադասությունների թվերը այնպես, որ ստացվի կապակցված տեքստ:

  Գնահատման չափանիշը: Պատասխանի համար տրվում է մեկ միավոր, եթե թվերի հերթականությունը ճիշտ է դասավորված: Սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

- **Համապատասխանեցմամբ առաջադրանքներ**

Կառուցվածքը: Ձախ սյունակում տրված յուրաքանչյուր տարբերակի համար պետք է ընտրել աջ սյունակում տրված տարբերակներից որևէ մեկը:

Անհրաժեշտ է յուրաքանչյուր տառի դիմացի պատուհանիկից ընտրել ճիշտ պատասխանը:

Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

Գերմաներենի թեստի առաջադրանքների կատարման համար նախատեսվում է գիտելիքների հետևյալ ծավալը.

Տեքստի ընկալում:

Բառապաշար: Բառագիտություն: Բառեր և իդիոմատիկ արտահայտություններ (կայուն բառակապկցություններ): Ածանցում և բառաբարդում: Գերմաներենի ամենատարածված նախածանցներն ու վերջածանցները:

Ուղղագրություն:

Քերականություն

Հոդ: Հոդի տեսակները, հոլովումը և գործածությունը: Հոդի բացակայությունը:

Գոյական: Գոյականների սեռը, թիվը և հոլովումը: Նախադասության մեջ գոյականների գործածությունը տարբեր հոլովներով:

Ածական անուն: Ածականների շարահյուսական գործառույթները: Ածականի հոլովումը: Ածականների համեմատության աստիճանների կազմությունը և կիրառումը:

Դերանուն: Տեսակները, նրանց հոլովումը:

Թվական: Թվականի տեսակները:

Բայ: Բայաձևեր, ինքնուրույն, օժանդակ և մոդալ բայեր, ուժեղ և թույլ բայերի ժամանակային ձևերի կազմությունն ու գործածությունը՝ **Präsens, Präteritum, Perfekt, Plusquamperfekt,**

Futurum ժամանակներով: Բայի սեռը, եղանակը: Բայի անվանական ձևեր, դերբայական դարձվածներ:

Մակբայ: Մակբայների իմաստային և շարահյուսական գործառույթները:

Կապ: Խնդրառությունը, **Genitiv, Dativ, Akkusativ, Dativ և Akkusativ** պահանջող նախդիրներ:

Շաղկապ: Համադասական և ստորադասական շաղկապ-ներ:

Եղանակավորող բառ-մասնիկներ:

Ձայնարկություն:

Շարահյուսություն

Պարզ և բարդ նախադասություններ:

Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Նրանց համաձայնեցումը և շարադասությունը:

Բարդ համադասական և բարդ ստորադասական նախադա-սություններ, գործածությունը, երկրորդական նախադասության տեսակները, շարադասությունը:

Man, es դերանուններով արտահայտված ենթակայով նախադասությունների գործածությունը:

Ժխտում: Ժխտականի դիրքը նախադասություն մեջ: